

ճառագայթները ծաղիկին հասցնել: Մենք չենք տեսած, որ այդ ծաղիկը սխալուէր, ու երեկոյան կողմ, իր գլուխը դարձնէր արեւելք, կամ առաւօտը՝ դառնար դէպի արեւմուտք:

Հետաքրքիր է գիտնալ թէ՛ Մոսկուան եւ էնկիւրին ի՛նչ տաքութեան ճառագայթներ, ուղղած են դէպի հայ ժողովուրդը, որպէսզի այս վերջինն իր դէմքը մտահօրէն դարձնէ դէպի այդ «արեւ»ները: Հայ ժողովրդի բնագրը վերադաս է, աւելի գիտակ՝ թշնամական է: Որովհետեւ բուլշեւիկ-թրքական յարաբերութիւնները՝ ինչ դրդապատճառ ալ որ ունենան, իրենց հետեւանքներով, հակահայկական են: Այդ արդիւնքները, անցնող տասնամեակի ընթացքին, վայելած է հայ ժողովուրդը, եւ նոր դառն հետեւանքներու ենթարկուելու համար տուեալներ չունի հակուելու բուլշեւիկեան Ռուսաստանի կողմը:

Շատեր կարող են ըսել, թէ քաղաքական խնդիրներու մէջ կուսակցութիւններն ու քաղաքական գործիչները պէտք է առաջնորդուին սառն դատողութեամբ եւ ոչ թէ բնազդով, կամ համակրութիւններով:

Այո՛, ուսական օրինատացիայի խնդիրը քննած ժամանակ պէտք է, իրօք, ելակէտ ունենալ ազգային քաղաքական շահը եւ առողջ տրամաբանութիւնը եւ ոչ թէ ըսել ու կրկնել արդէն հասարակ տեղի դարձած ճշմարտութիւններ, որոնք այս պարագային արժէք ունենալէ դադրած են:

Օրինակի համար, թէ Ռուսաստանը մեծ պետութիւն մըն է եւ մեզի դրացի, թէ այդ մեծ պետութիւնը կը ձգտի տաք ջուրերն իջնել, թէ ուսը հայուն չի կոտորեր, եւն., եւն. . .

Հետեւաբար ի՞նչ ընենք: Բուլշեւիկի եւ Ռամկավարի կարծիքը պարզ է. — ոտքով-գլուխով ուղևորական յորձանուտին մէջ իյնալ:

Սակայն, ի՞նչ շահելու համար: Մենք շահ մը չենք տեսներ: Իսկ հայ բուլշեւիկները նեղը մնացածին պէս, հեռաւոր ապագային ձգուած համաշխարհային յեղափոխութեան պիտի կատչին:

Եթէ Ռուսաստանի այդ յատկութիւններէն օգուտ պիտի դայ հայ ժողովուրդին, առանց մեր ցանկութեան իսկ կուզայ այդ օգուտը: Եւ եթէ հայերը չունենան ուսական օրի-

նատացիա, ուսը իր մեծութենէն եւ ձգտումներէն ոչինչ կը կորսնցնէ: Իսկ եթէ հայերը քաղաքական սխալով մը, լաւ չկշռուած ուսական օրինատացիա մը ունենան, կրնան շատ բան կորսնցնել, վճռական վայրկեաններուն մինակ մնալով:

Եւ վերջապէս քաղաքական սառն դատողութիւնն ու ժողովրդի մը առողջ բնազդը միշտ ալ իրարու կը զուգադիպին: Հայ ժողովուրդը եթէ միայն կոյր բնազդով առաջնորդուած ըլլար, անիկա յաւիտենական սիրահար մը պիտի մնար քրիստոնեայ Ռուսաստանին: Սակայն, մենք կը տեսնենք, որ այդ այդպէս եղած չէ միշտ եւ այդպէս չէ այսօր ալ:

Ուրիշ ցայտուն օրինակ մը կրնան ծառայել հայ-քրդական յարաբերութիւնները:

Եթէ հայ ժողովուրդը առաջնորդուէր միայն բնազդով եւ վրէժխնդրութեամբ, յաւիտենական թշնամի պիտի մնար քիւրդ ժողովուրդին, որ իր յետամնացութեան շնորհիւ, հայ ժողովրդի կոտորման մասնակից եղաւ: Մինչդեռ այսօր հայ ժողովուրդի համակրանքը քիւրդ ժողովուրդի հետն է, կամ այլ խօսքով, հայ ժողովուրդը քրդական օրինատացիա ունի: Ինչո՞ւ: Որովհետեւ քիւրդ ժողովուրդն իր ազատագրութեան համար պատերազմի բռնուած է թրքական բռնակալութեան դէմ, եւ կ'աշխատի քայքայել այն բռնակալ բռունցքը, որ կը ծանրանայ Քրդստանի եւ միլեւոյն ժամանակ Տաճկահայաստանի վրայ:

Հայ ժողովուրդը ե՛ւ բնազդով ե՛ւ քաղաքական կատարեալ գիտակցութեամ կը տեսնէ, որ քրդական այս շարժումը Թուրքիոյ քայքայման կը նպաստէ, հետեւաբար, իր հետեւանքով կը համադատասխանէ հայկական շահերուն: Այս կացութեան բերումով հայութիւնը, առանց նկատի առնելու Քիւրդստանի անորոշ վիճակը եւ քիւրդ ժողովրդի փոքրութիւնը, ազգային շահերու տրամաբանութեամբ՝ կը հակուի այդ նոր ուժի կողմը:

Կարող ենք եզրակացնել, որ հայ ժողովուրդը կը հակուի այն ազգերու եւ պետութիւններու կողմը, որոնք գործօն քայլեր կ'ընեն թրքական տիրապետութիւնը խորտակելու: Այդ խորտակումէն կը ծնի հայկական կատարեալ ազատագրումը: